

Շուրճիկ նագառյան

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԱՄԴԱՐՅԱՆԻ ՄԻ ՆՈՐ ԶԵՌԱԳԻՐ
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

19-րդ դարի 20—30-ական թվականների նշանավոր բանաստեղծ Հարություն Ալամդարյանի ստեղծագործական ժառանգությունը ղեռնա քավարար չափով ուսումնասիրված չէ։ Մինչև այժմ մեզ հասած նրա արժեքավոր գործերից հայտնի են «Չափաբերանք» բանաստեղծությունների ժողովածուն և «Ռուս-հայերեն համառոտ բառարան»-ը։

Ջնայած Ալամդարյանը ապրել է կարճ կյանք (1796—1834), այն էլ դառնություններով լի, սակայն նրա կենսագրությունից երևում է, որ նրա ստեղծագործ միտքը տվել է շատ ավելի արգասավոր պտուղներ, քան հայտնի են եղել մեզ մինչև այժմ։ Այդ ենթադրությունը ավելի ևս չի մնավորում է մեր Ձեռագրատան արխիվից վերջերս հայտնաբերված նրա մի նոր ձեռագիր աշխատությունը։ Այդ՝ ռուս-հայերեն քերականության մի բաժինն է, «Հղովառու նախադասությունք» — Предлоги, управляющие падежами» ենթավերնագրով։ Ձեռագիրը բաղկացած է 70 մեծագիր էջերից, որտեղ շարադրված են ողուսերեն նախադասությունների գործածության բոլոր դեպքերը՝ հայերեն թարգմանությամբ ու բացատրություններով։ Աշխատանքը բաժանված է հոդվածների և 60-րդ հոդվածից կրկնվում է. կրկնված մասը գրված է նույն չափի, բայց ավելի սպիտակ թղթի վրա՝ հավանաբար տպագրության հանձնելու մտադրությամբ։ Ձեռագրին կցված է նաև մի պատառիկ՝ սևագիր վիճակում, որտեղ խոսվում է բայի մասին։ Այս փաստերը, ինչպես և այն, որ քերականական աշխատությունը չէր կարող նախդիրներով սկսվել, ցույց են տալիս, որ Ալամդարյանը, անկասկած տարբեր ժամանակներում գրել է հայկական դպրոցների համար ռուս-հայերեն քերականություն և մեզ հասել է միայն նրա մի հատվածը։ Խեղճ բանասերների մանրակրկիտ պրպտումների ընթացքում գտնվեն և մնացյալ մասերը։

Աշխատության շապկի վրա այլ ձեռագրով գրված է. «Օրենք ռուս քերականության — Ալամդարյանի»։ Այս տեղեկությունը անկասկած չէր բավարարի մեզ, եթե նրան պատկանող այլ աշխատությունների ձեռագրերի նմանությունները չլինեին։ Այլ համոզիչ հանգամանքներ նույնպես կան, որոնք հաստատում են ձեռագրի հեղինակի իսկությունը։

Ալամդարյանը իր ժամանակի հայ ինտելիգենցիայի մեջ համբավավոր առևտրականներից մեկն է եղել։ Նրա հասարակական ու գրական գործունեության մեջ առանձնահատուկ կերպով դրսևորվել է ջերմ համակրանքը դեպի ռուսական կուլտուրան ու գիտությունը։ Ալամդարյանը պարսկական բարբարոսական լծից Հայաստանը աղատելու և նրա համար լուսավոր ուղի հարթելու միակ հնարավորությունը ռուսական պետականության

հովանավորության մեջ է տեսել, Մի առաջադիմական զաղափար, որը ինչպես հայտնի է, այնքան խոր արմատներ է ձգել նրա աշակերտներից Խաչատուր Արուստանի հոգու մեջ:

Մինչև Ներսիսյան դպրոցի տեսուչ լինելը Ալամդարյանը աշխատել է Հաղարյան ճեմարանում: Իր կյանքի մեկ երրորդը (1813—1824) անցկացնելով Մոսկվայում, նա ամենայն ջանասիրությամբ ուսումնասիրել է ռուսերեն լեզուն և դրականությունը, Նա լրջորեն մտահոգված է եղել հայ աշակերտությանը ռուսերեն սովորեցնելու գործը հաստատուն հիմքերի վրա զննելու զաղափարով: 1821 թվին Մոսկվայում հրատարակվել է նրա «Ռուս-հայերեն համադրո՞ր առարան»-ը, որն իր տեսակի մեջ երրորդ աշխատությունն է 19-րդ դարի առաջին քառորդում՝ Դրիզոր Խալդարյանի և Կլեոպատրա Սարաֆյանի ռուս-հայերեն բառարան ձեռնարկներից հետո: Հետագայում Ալամդարյանը ռուսերեն լեզուն հայ պատանիների և երիտասարդների մեջ տարածելու համար զիմում է ավելի որոշակի ու գործնական մեթոդների: Նուա Նոր Նախիջևանի շրջանի գործունեության մասին ժամանակակիցներից մեկը հետևյալն է պատմում. «Մկրտիչ վարդապետը ուսյալ մարդ չէր, նրանից շատ քան չէր կարելի սովորել, իսկ ընդհակառակը, Ալամդարյանը լավ վարժապետ էր: Ես առանձին ուսում չեմ ստացել, դպրոց, ուսումնարան չեմ զնացել, բայց իմ այժմվա ունեցած քահանայական կրթությունս նրանից եմ ձեռք բերել: Նա բացի հայոց լեզվից, լավ գիտեր և ռուսաց լեզուն, քաղաքից աշակերտներ էին զալիս նրանից քերականություն սովորելու: Շատ անգամ նա ուղղում էր Մկրտիչ վարդապետի ռուսերեն գրությունները»:

Ալամդարյանի այս «Երենք ռուս քերականության» ձեռագիր աշխատության մեջ չի հիշատակված տարեթիվը: Սակայն այն թուղթը, որի վրա գրված է աշխատանքը՝ 1832 թվի արտագրություն է, հետևաբար այն 1832 թվից առաջ գրված լինել չէր կարող: 1831—32 թվականները Ալամդարյանի համար ծանր տարիներ են եղել. այդ շրջանում նա ռեակցիոն հոգևորական իշխանությունների կողմից հալածական աքսորված էր Հաղպատ, որտեղ տառապել է խուլերա հիվանդությամբ: Դասկածից վեր է, որ Ալամդարյանը իր այս աշխատանքը գրել է 1833—34 թվերին, հավանաբար Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքում, որտեղ վերևում հիշած վկայությամբ քաղաքից աշակերտներ են եկել նրա մոտ ուսերեն քերականություն սովորելու: Այս թվերին Ն. Նախիջևանի ս. Խաչ վանքում է եղել նաև Մսեր Մսերյանը: Նա Դորպատում գտնվող Խ. Արուստանի և Սո. Նազարյանի գրած համակների մեջ խորը վշտով է հայտնում Հ. Ալամդարյանի՝ ավագանների կողմից սպանվելու տխուր լուրը, որը տեղի է ունեցել 1834 թվի մայիսի 14-ին: Շատ հավանական է, որ հենց այստեղ էլ Ալամդարյանի՝ մտերիներից Մսեր Մսերյանի ձեռքն է ընկել աշխատանքը, որն այժմ պահվում է Ձեռագրատան արխիվում Մոսկվայի վավերագրերի մեջ:

Հարություն Ալամդարյանի անտիպ այս աշխատությունը, որ մինչև հիմա հայտնի չի եղել նույնիսկ զրական նեղ շրջանակներին, մի շատ արժեքավոր նորություն է 19-րդ դարի 30-ական թվականների հայ-ռուս զրական կապերի տեսակետից: Սա մի ուշադրավ, պատմա-լեզվագիտական

փաստաթուղթ է հայ-ռուս ժողովուրդների կուլտուրական կապերի, դեպի ռուս ժողովուրդը հայ առաջավոր ինտելիգենցիայի ունեցած ջերմ վերաբերմունքի, ինչպես նաև հայերեն և ռուսերեն լեզուների պատմական քերականության ուսումնասիրության մասին: Այս աշխատության մեջ Ալամդարյանը Արովյանի, Նաղարյանի, Նալբանդյանի և ման, գործնականորեն դրսևորում է իր համակրանքը ռուս ժողովրդի լեզվի ու գրականության բարերար ազդեցության անհրաժեշտության մասին:

Հայ բանասիրության մեջ մինչև 1830-ական թվականները հայտնի է միայն Արրահամ սարկավազ Վաղարշապատցի — Աստվածատրյանի «Համառոտ քերականութիւն ի ռուս լեզուէ ի հայ» — Краткая российская грамматика въ пользу Армянского юношества՝ ձեռնարկը, որը լույս է տեսել 1827 թվին Մոսկվայում: Հետագայում՝ 1840 թվին Վենետիկում հրատարակվում է Մինաս Բժշկյանի «Հայ-ռուս քերականությունը»: Նույն թվականին Ռաչատուր Արովյանը մրցանակի է ներկայացնում «Ռուս տեսական և գործնական քերականություն» աշխատությունը, որը մինչև այժմ գտնվում է ձեռագիր վիճակում: Այս աշխատության ռուսերեն առաջարկում Արովյանը չափազանց ուշադրավ և արժեքավոր դիտողություններ է անում վերևում հիշած հեղինակների քերականական աշխատությունների վերաբերյալ, Նա գրում է. «Правда по временам выходили книги отчасти похожие на подобное руководство, как та грамматика Архидьякона Аврама Вагаршапатского, напечатанная в Астрахане, грамматика отца Минаса Бжишкяна в Венеции, но оне не выполнили своих назначений. Первая, будучи только переводом Русской грамматики на армянский язык, содержит в себе только сухие определения правил без практических примеров, а вторая стара и при том Автор, выражая Русские слова Армянскими буквами, перековеркал их Италианским произношением».¹

Ինչպես տեսնում ենք, Արովյանին չեն բավարարում Արրահամ Վաղարշապատցու և Մինաս Բժշկյանի հայ-ռուս քերականության ձեռնարկները: Եթե նրան ծանոթ լիներ իր ուսուցչի՝ Ալամդարյանի սույն աշխատանքը, անկասկած ուրախությամբ պիտի ընդգծեր վերջինիս բացարձակ առավելությունը՝ նրանց համեմատությամբ:

Մեր նպատակը չէ այստեղ մասնագիտական քննության առնել Ալամդարյանի ձեռագիր քերականությունը: Ցանկանում ենք միայն ընդհանուր գծերով թվել նրա մի շարք ուշադրավ կողմերը:

1. Եթե Ալամդարյանից առաջ Արրահամ Վաղարշապատցին իր ռուս-հայերեն քերականության մեջ, մի թերթի վրա, միայն թվում է ռուսերեն նախդիրները հայերեն թարգմանությամբ և տալիս նախդիրների ձևական սահմանումը, ապա Ալամդարյանը ռուս-հայերեն նախդիրներին նվիրում է մի ամբողջ բաժին և մանրամասնորեն բացատրում է ռուսերեն հայերեն նախդիրների ֆունկցիաները, նրանց հոլովական կիրառման բոլոր ձևերը, նմանությունները և տարբերությունները երկու լեզուների մեջ:

2. Ալամդարյանը դուրս գալով քերականական չոր ֆորմուլաների սահմանից, յուրաքանչյուր նախդիրի գործածության դեպքում խոսքի

¹ «Նախաշավիղ» էջ 28:

իմաստի մեջ առաջացած փոփոխությունը բացատրում, մատչելի է դարձնում բազմաթիվ օրինակներով, գործնական վարժություններով և կենդանի խոսքի մեջ հասկանալի դարձնում նախդիրների կատարած դերը, նրանց ֆունկցիոնալ հոլովական կիրառման բազմազան ձևերը:

3. Չնայած Ալամդարյանը չի խմբավորել յուրաքանչյուր հոլովով գործածվող նախդիրները, որը անկասկած կկենարոնացներ աշակերտի ուղադրությունը, սակայն առանձին-առանձին թվել է բոլոր նախդիրների հոլովական կիրառման տարրեր ձևերը, միաժամանակ ցույց տալով միևնույն նախդիրի տարրեր նշանակությունը խոսքի մեջ օր, «За — վասն — ընդ, փոխանակ առաջ քան, յայն կոյս, գ, գհետ, գկնի, իբր, արտաքոյ՝ Սա ընդ винительный հոլովոյ երբեմն թարգմանի սեռականաւ, և միով ի նախադրությունից վասն ընդ. И будете ненавидимы всеми за имя мое և եզիջք ատեցեալք ամենեցունց սառն անուն իմոյ»:

А мне за пески и за сон
Не надобен ни миллион.

Крылов

Երբեմն հայցականաւ և նախադրութեամբս յառաջ քան — За шесть дней до пасхи, — վեց ատուրք առաջ քան զատիկն....., երբեմն սեռականաւ և նախադրութեամբս յայն կոյս...

Երբեմն պատմականաւ. — Он же выслав всех вон, и взяв ее за руку возгласил. — Եւ նորա հանեալ զամենեսին արտաքս՝ կալաւ զձեռանէ նորա բարբառեցաւ:

За — ընդ творительный հոլովոյ բացատրի սեռականաւ և նախադրութեամբս զկնի, գհետ, և երբեմն վասն. что тебя до того? ты иди за мною. — Թեգ չէ՞ փույթ. դու եկ զկնի իմ:

А овцы за ним идут. — ոչխարքն գհետ նարա երթան:

Послать кого за водою. — առաքել զոք զջրոյ:

Послать кого за лекарям կամ по лекарям. — առաքել զոք ի կոչել զբժիշկն. կամ՝ ի կոչ բժշկի: Я замужная. — Ես այր ունիմ, արամբի եմ:

Она поехала в Версаль, увиделась с друзьями, за тайну рассказала им... —

— Նա չորաւ ի Վերսալիայ, ետես զբարեկամս իւր իբր խորհուրդ պատմեաց...

У него прекрасный дом за городом. — է նորա տուն գեղեցիկ արտաքոյ քաղաքին:

Брат мой купил большой сад за рекою. — եղբայր իմ գնեց գայգի մեծ յայն կոյս գետոյն:

У него все за ключом. — Նա զամենայն ինչ ընդ փականոք ունի..... և այլն:

4. Ալամդարյանի այս աշխատությունը պատմա-լեզվագիտական նշանակությունից բացի, ունի մի այլ առավելություն: Նրա քերականական բացատրությունների պրակտիկ օրինակները, ինչպես երևում են մասամբ

¹ Օրինակները բերված են կրճատումներով:

այս մեջբերումներից, չեն սահմանափակվում միայն ժամանակի կրոնական, միստիկական գաղափարներով: Ալամդարյանը քերականական խոսքի մեջ հանդես է եկել նաև աշխարհիկ, ժողովրդական լեզվական մտածողությամբ: Որինակ՝ Я на короткое время поеду в деревню.— Ես առժամանակաւ մի գնացից ի գիւղն:

Я купил себе сукно на сюртук.— Դնեցի գշուխայ վասն պատմունանի իմոյ և այլն:

5. Ալամդարյանը քերականական վարժությունների ու բացատրությունների համար չի բավարարվել ինքնուրույն օրինակներով, նա օգտագործել է իր ժամանակի ողու գրողներից Կոխլովի, Կարամզինի, Դիմիտրիևի, Քեմնիցեբի, Շախովսկու, Վ. Պուշկինի և ուրիշների ստեղծագործությունները: Մի քանի տեքստեր էլ կազմել է ողուաց ոամկաբանությունից: Ալամդարյանը, գրեթե առաջինը հայ գրողներից, օգտագործում է ողու ժամանակակից ականավոր առակագիրների՝ Կոխլովի, Քեմնիցեբի, Դիմիտրիևի ժողովրդական առակները և ճանաչելի դարձնում նրանց հայ աշակերտությանը: Հատկապես Կոխլովի առակների տեքստերի վրա է նա կատարում քերականական վարժությունները, մեջբերումներ անելով նրա մինչև այժմ էլ մեր դասագրքերում տեղ գտած բազմաթիվ առակներից՝ («Գայլը և գառը», «Մենավաճառն ու կոշկակարը», «Աշխատասեր արջը») և այլն:

6. Ալամդարյանի այս աշխատությունը գրված է մատչելի ողուերենով և թարգմանությամբ պարզ գրաբաղով՝ որպիսին նրա բանաստեղծությունների լեզուն է:

Եթե բարեբախտությամբ մեզ հասնեի Հարություն Ալամդարյանի «Ռուս-հայերեն քերականության» դասընթացն ամբողջությամբ, ապա մենք կունենայինք ողու-հայերեն գործնական քերականության առաջին նմուշը 19-րդ դարի 30-ական թվականների սկզբին գրված: